«Պեպո»-ն հայ ու վրաց թատրոններում: Գորկու կարծիքը «Պեպո»-ի մասին և նրա խոշոր աշխատանքը «Պեպո»-ի Տերյանի ուսուցիչն թարգմանութեան վրա: «Քանդած օջախ» (1873): Իրականութեան արտացոլումը պիեսում: Տիպեր՝ Ոսեփ, Սաշո, Դիմ-Մոզի, Նատո, Սալոմե, Մարմարով, Փարսիդ, Դարչո, Միքո: Պիեսի զրամատիւմը, կենցաղի գունագեղ նկարագրութիւնը, լեզվի տիպականութիւնը: Սունդուկյանի մյուս զրամաները: Բուրժուական ընտանիքի և ցարական չինովնիկութեան քննադատական պատկերացումը «Ամուսիններ» կոմեդիայում: Սունդուկյանի արձակը. Համալի և Հաղիդի մասլահաթները, «Վարինկի վեչերը»: Բուրժուական աշխարհի գեծ ուղղված ծաղրը մասլահաթներում: Իրականութեան հակասութիւնների պատկերացումը «Վարինկի վեչեր»-ում. պատմվածքի գեղարվեստական բարձր արժանիքները:

Սունդուկյանի ստեղծագործութեան նշանակութիւնը հարեման ժողովուրդների գրականութեան հա-

մար: Մունդուկյանի քննադատական ունակությամբ: Մունդուկյանի լեզուն, Թբիլիսիի բարբառը. Մունդուկյանի յերգիծանքի բնույթը: Մունդուկյանի կապը Մոլիերի, Գոգոլի և Ոստրովսկու հետ: Մունդուկյանը վերադասադասյին մեծ դրամատուրգ ու ունակագրող կատակերգու թյան հիմնադիր: Մունդուկյանի թատրոնը. Գ. Զաքյան, Մ. Ամերիկյան, Ա. Մանգլիսյան, Տեր-Դավթյան, Հասմիկ, Ավետ Ավետյան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփաննոս Նազարյան, «Յերկերի ժողովածու», հ. I:
2. Մխաբիկ Նալբանդյան, «Յերկերի ժողովածու», հ. I և II:
3. Սմբատ Շահագիզ, «Լեվոնի վիշտը» և «Բանաստեղծութուններ», «Հրապարակախոս ձայն»:
4. Գ. Դուդախյան, «Բանաստեղծութուններ»:
5. Ռաֆայել Պատկանյան, «Նոր նախնիների քնարը», «Յերկերի ժողովածու», 2-րդ հատոր:
6. Ղեվոնդ Ալիշան, «Նվաղք», գ. հատոր:
7. Մկրտիչ Պեշիկպաշյան, «Տաղք», «Կոռնակ», «Արշակ Բ.»:
8. Պետրոս Դուրյան, «Տաղք և Թատերգութունք»:
9. Պերմ Պոռյան, «Հուշիկներ», «Սոս և Վարդիթեր», «Կովածաղիկ», «Հացի խնդիր», «Յեցեր», «Բիզե», «Հունսն»:

10. Հագարոս Աղայան, «Իմ կյանքի գլխավոր դեպքերը», «Արություն և Մանվել», «Յերկու քույր», «Բաժանություն», «Բանաստեղծութուններ», «Հեքիաթներ», «Բյուրդի», «Ժամանակակից ատենախոսություն»:
11. Դաբ Բիել Սաևդուկյան, «Յերկերի ժողովածու» (1935):

ՅԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ

80—90-ԱՎԱՆ Թ. Թ.

«Մշակ»-ի հիմնադրումը (1872): Գ. Արծրունին և նրա հրապարակախոսությունը. «Մեղու Հայաստանի»-ն և «Նոր դար»-ը: Դրանց հակամարտութունները «Մշակ»-ի հետ: Ռուս-տաճկական պատերազմը (1877—78). «Հայկական հարցը», «Փորձը» և «Արձագանք»-ը: Ռեակցիան Ռուսաստանում: Յարիզմի ոռոգականացման քաղաքականությունը: Ազգային ճանշումը Հայաստանում ու նրա հետագա առաժանցական ուժեղացումը: Ցարական Վառաձրության հալածանքները հայ կուլտուրայի դեմ: Հայկական դպրոցների փակումը: Գյուղացիության ծանր վիճակը: Ժողովրդական մասսաների զգոնությունն ու ապստամբութունները ցարական կառավարության դեմ (1883 և 1887 թ. թ.):

Ռեակցիան Տաճկահայաստանում: Համիդյան ուժերի խտրականությունները:

Տաճկական գրաքննության դաժանութունները: Հայ թատրոնի արգելումը: Պոլսահայ ղեմոկրատական խավերի պայքարը ընդդեմ տիրապետության ու հոգեվո-

բազմաթիվ լինելու Գյուղացիական սպասարկութիւնները ճանկահալաւորանում՝ առաջնորդմի դեմ (80-ական թվականներին)։ Ութսունական թվակ. և հետագա տարիներին Անդրկովկասը։ Արդյունաբերութեան զարգացումը։ Բանվոր դասակարգի առաջացումը։ Բանվորութեան վայրագ շահագործումը։

«Մուրճ»-ը և նրա զերը հայ գրականութեան պատմութեան մեջ։ «Մուրճ»-ի բանաստեղծները։ Լ. Մանվելյանի գրական գործունեութիւնը։ «Մասունցի Իսկիթ» եպոսի մշակումը։

Վ. Միրաքյանի ստեղծագործութիւնները։ «Լաւ վարի վորսը» պոեմը։ պոեմի ախպիրը, լեզուն, պատկերները, կառուցվածքը։ Պոեմի նշանակութիւնը հայ գրականութեան մեջ։

Արեւմտահայ մամուլը՝ «Մասիս» և «Արեւիկը»։ Մամուլյանի «Ար. մամուլ»-ը, Պարոնյանի «Խիկարը»։

Ռոմանտիզմը վեպի բնագավառում—Բաֆֆի։ Ռեալիստական գրականութեան զարգացման նոր և առաջը։ Պայքար ռոմանտիզմի դեմ այս հաւաքում։ Ռեալիզմի ծագումը։ Շիրվանդադեյի և Պարոնյանի ստեղծագործութիւններն իբրեւ ռեալիստական ուղղութեան բարձրագոյն արտահայտութիւններ։ Նոր գրական լեզվի կայունացումը այս շրջանում։

1. ՀԱՅՈՒՔ ՊԱՐՈՆՅԱՆ (1842—1891)

Կյանքը։ Մուտքը գրականութեան մեջ («Արեւիկյան տառապանք»)։ Պարոնյանը վերադառնալ հայ խոշորագոյն գեղեցիկ յերգիծաբան։ Կապիտալիստական պետութիւններին, սոցիալական ու ցարական

բռնակալութիւններին, դիմանադիտութեան մեջ թագաւորող կեղծիքի և փոքր ազդեցիկութիւններին ստորկացնելու քաղաքականութեան մերկացումը («Հոսհոսի ձեռատետրը», «Ծիծաղ», «Կոմիթներ» և այլն)։

Բուրժուա-նացիոնալիստական և կրօնական գործիչների հակաժողովրդական գործունեութեան մերկացումը («Աղգային ջոշեր»)։ Արժեքներ, Չամուր-ճյանի, Նար-Պէյի և այլոց յերգիծական պորտրետներ, Պարոնյանի սարկազմը։

Բուրժուական հասարակական հարաբերութիւններին, բուրժուազիւայի զանազան խավերին կենցաղի, ընտանեկան փշաքանդ բարքերի, հոգեվորականութեան, ինտելիգենցիայի յերգիծական պատկերները («Մեծապատիւ մուրացիկներ», «Առտին տեսարաններ», «Պատույթը Պարսիկէն մեջ», «Բաղդասար աղբար» և այլն)։ Արիստոքրատիայի և Բաղդասար աղբար ախպիրը։ Պարոնյանի ստեղծագործութեան բովանդակութեան հարստութիւնը և խորութիւնը։ Պարոնյանի ռեալիզմը։ Պարոնյանի գեղեցիկ տարիքը և ստեղծագործութեան ժողովրդայնութիւնը։ Նրա գաղափարական կապը Նալբանդյանի հետ։ Պարոնյանը՝ հայ ժողովրդի ազատութեան գաղափարի ամենաջերմ պաշտպան։ Պարոնյանի կիրառած գրական ժանրերը—յերգիծական նովելներ, կատակերգութիւն և այլն։ Պարոնյանի յերգիծաբան յերգիծաբանութեան կուլտուրայի (Արիստոփանես, Մոլիեր) հաջող ոգտագործումը—Պարոնյանի կողմից։ Պարոնյանի խոշոր նո-

վատորական զերը մեր նոր գրականութեան զարգացման պատմութեան մեջ:

Պարոնյանի թողած ազդեցութիւնը հետագա հայ յերգիծարանների վրա: Պարոնյանն իբրեւ ըննադատ, նրա յխատեան վերաբերմունքը դեպի ուսմանտիկ—ազգայնական գրականութիւնը:

Պարոնյանը վերպես միջազգային յերգիծարանութեան հանճարեղ գեմքերից մեկը:

ԾԵՐԵՆՅ (ՀՈՎՍԵՓ, ՇԻՇՄԱՆՅԱՆ) (1822—1888)

Կյանքը: Մանկավարժական գործունեությունը Կ. Պոլսում և ապա Փարիզում (Մուսուլման վարժարան): Հասարակական գործունեությունը Պոլսում: Ծերենցը Թրիխում և մանկավարժական գործունեությունը Ներսիսյան դպրոցում: Ծերենցի պատմական վեպերը՝ «Յերկունք Թ. դարդ», «Թեոդորոս Ռշտունի» և «Թորոս Լեւոնի»:

Ծերենցը վերպես պատմավիպագիր: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ 9-րդ դարում և դրա պատկերացումը Ծերենցի «Յերկունք»-ում: Սուրբեկի Հովնանի ժողովրդական հերոսական տիպը: Ծերենցի իդեալիստական—ինդիվիդուալիստական պատմահայեցողությունը: Նրա ուսմանտիկ ըննադատությունը Հ. Պարոնյանի մոտ: Ծերենցի պատմական վեպերի արժանիքներն ու թեթրությունները: Նրա զերը մեր գրականութեան պատմութեան մեջ իբրեւ տուժին պատմավիպագիր:

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱՐ (1842—1901)

Կյանքը: Արեւմտահայ վիպագրութիւնը Ծերենցից հետո: Ընտանեկան բարքագրական վեպի հաջորդելը պատմականին: Տյուսարի «Մայտա» վեպը (1883) և նրա շուրջը բոլորովաժ բանավեճը. Հ. Պարոնյանն այդ վեպի մասին: Տյուսարի մյուս վեպերը—«Սիրահունչ» (1885) և «Արաքսիա» (1887): Կանանց հարցը Տյուսարի վեպերում:

Ս. Տյուսարի ուսմանտիկը, վեպերի լեզուն, վոճը, կոմպոզիցիան, հանդույցների անպատեղի լուծումը, տիպերի սխեմատիկը (Արաքսիա և տիկին Արգարյան): Ս. Տյուսարի կրած գրական ազդեցությունները խնդիրը (Ժորժ-Զանդ):

ՐԱՖԳՈՒ (1835—1888)

Րաֆֆու կյանքը: Մուտքը գրականութեան մեջ: Աշխատակցութիւն «Մշակին», «Հյուսիսատիպին», ապա «Արձագանքին»: Րաֆֆու ստեղծագործութեան առաջին շրջանը: Պատմվածքներ Պարսկաստանի կյանքից: «Փունջի» յերկու հատորը (1874): Ֆեոդալիզմի ըննադատությունն այս գրվածքներում: «Հյուսիսատիպին» և Մ. Նայրանյանի ազդեցությունը Րաֆֆու վրա:

Րաֆֆու «Վոսիկ աքաղաղ» և «Զահրաւար» վեպերը: Բուրժուազիայի մեղադրումն այս վեպերում: Մասիսյանը և Ճանճուր Իվանիչն իբրեւ տիպական միջոցներով ուսուցանող վաճառականների տիպեր: Միքայելի և Սոսիֆանի կերպարների սխեմատիկ լինելը: «Սաչապոյի Հիշատակարանը»:

Ռուս-թուրքական պատերազմը և Ռաֆֆին։ Տաճկահայերի ազատագրության խնդիրը սուլթանիզմի լծից։ Այդ հարցի արծարծումը «Ջալալեդդին», «Խենթ» և «Կայծեր» վեպերում։ Հայ բուրժուազիայի և հոգեվորականության ու յեկրոպական պետությունների քննադատությունը «Կայծեր»-ում։ Ռաֆֆու նացիոնալիզմը վերահիշյալ յերկերում։ Ռաֆֆու վեպերի ուսմանտիպը։ Վարդանի, Դուդուկչյանի, ծերունի Սաչոյի, Սարհադի, Կարոյի, Ասլանի, վերստը Ավոյի ուսմանտիկ տիպերը։ Բացասական տիպերի ուսմանտիկ տիպերը։ Բուրժուազիայի, Սեր-թոգիկ, Ֆաթթիա ընդ և այլն։ Ապագա բուրժուական Հայաստանի պատկերը «Խենթ» և «Կայծեր» վեպերում։ Ցարական բանակի ոգտագործման հարցը «Խենթ» և «Ջալալեդդին» յերկերում։ Ռաֆֆու ծրագրային վեպերի ուժեղ սուբյեկտիվիզմը։

Ռաֆֆին վերադառնալու հայ նոր պատմական վեպի նշանավոր ներկայացուցիչ։ Նրա «Դավիթ բեգ» և «Սամվել» պատմական վեպերը։ Ռաֆֆու այդ վեպերը վերադառնալու պատմական անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմական արտահայտություն։ Դավիթ բեգի, Սամվելի և Մուշեղի կերպարները։ Մերսեթյանի, Վահան Մամիկոնյանի ու Մելիք-Ֆրանգյուլի բացասական տիպերը։ Ֆրանկի հերոսների հայրենասիրությունը։ Ռաֆֆու քաղաքական աշխարհայացքը և նրա հակասությունները։ Պատմական վեպերի քաղաքական նպատակադրումները։ Պատմական սրինակներով իր ժամանակակից հասարակական իրավունքները կերպարված Ռաֆֆու տեղեկները։ Պատմական վեպերի խոշոր գեղարվեստական արժեքը։

Ռաֆֆու տեղը հայ գրականության պատմության մեջ։ Հայ գրական լիզվի դարաշրջումը Ռաֆֆու վեպերում։ Ռաֆֆու կրթական ուղեգրությունները։ Ռաֆֆին և հին հունական գրականությունը, ֆրանսիական ուսման գրականությունը։

Շիրվանզադե (1858—1936)

Կյանքը։ Շիրվանզադեի առաջին գեղարվեստական յերկը՝ «Հրդեհ նավթագործարանում» (1885)։ Սոցիալական նոր փոխարարերությունների արտացոլումը այդ յերկում։ Կապիտալիստի կերպարը (Իվան Գրիգորի Մարությանը)։ Բանվորների պատկերում։ Բանվոր դասակարգի ծանր կացությունը։ «Գործակատարի հիշողությունից» վիպակը։ Բուրժուազիայի մերկացումը այս վիպակում։ «Նամակատարը»։

«Նամակատար»-ը (1885), «Ցավագար»-ը (1897)։ Գաղափարական քաղաքի հեռանկարային ու տղիտություն, նահապետական կենցաղի բացասական գծերի, միջնադարից ժառանգած վայրենի նախապաշարումների քննադատությունը այս վիպակներում։ Բարեկարգի, Սոնայի, Գրիգորի Մանիկի, Մեյրանի, Սուսանի, Հայրապետի տիպերը։ Հեղինակի հումանիզմը և ժողովրդասիրությունը այդ յերկերում։

Շիրվանզադեի ստեղծագործական կարողությունների դարաշրջման հետևյալ հատված։ Շիրվանզադեն մեծ վեպերի հեղինակ։

«Արևիկի իմաստասր» (1893)։ Իմաստասրի կերպարը։ Բուրժուական մարդասիրություն և բարեգործություն ուժեղ ծաղրը «Արևիկի իմաստասր» վեպում, արծարծած հասարակական-քաղաքական պրոբլեմները։

ները: Մաավորականության տարրերը շերտերը վի-
պում. Դիմաքսյանի, Բարաթյանի, Վեքելյանի, Մալ-
յանի, Պյոտոր Սուրճոնի, Ամբուլով Աֆանասովիչի,
Մարգար Աղայի, Աննայի, Գայանեյի, Պ. Կարին-
յանի տիպերը:

«Քառս» (1898): Արդյունաբերական Բազմի, հայ
բուրժուազիայի կյանքի ու բուրժուական այլանդակ
ընտանիքի նկարագրություններն ու մերկաշուծը
«Քառս»-ում: Սմբատ, Միքայել և Արշակ Ալեմյան-
ները: Ալեմյան հոր վարպետ տիպադրուծը: Մարութ-
խանյանի և նրա կնոջ Մարթայի տիպերը: Տարբեր
ազգերի բանվորների յեղբայրական համերաշխության
անդրադարձումը վիպում: Բանվորների կերպարները՝
Կարապետ, Ռասուլ, Իվան: Հայ կյանքի աննախընթաց
լայն ընդգրկումը վիպում: Հեղինակի հասուն տարի-
ները գիտությունների ու փորձի ոգտագործումը:
«Քառս»-ի քննադատական ուսուլիվը: Հայ վիպի զար-
գացման հիմնական եռույններն ու «Քառս»-ն իբրև
այդ զարգացման բարձրակետը:

Շիրվանզադեյի պատմվածքները («Արտիստ»,
«Կրակ» և այլն): «Վարդան Ահարունյան» անավարտ
վեպը, այդ վիպի գեղարվեստական խոշոր արժանիքները:
Շիրվանզադեն — դրամատուրգ: Պատվի համար» (1905):
Դրամայի թեմատիկայի ու նրա մեջ արժաբեմա՝ պրո-
լեմների հարակցությունը «Քառս»-ի հետ: Ելիգրարովը,
Սաղաթիկը, Մարգարիտը, Ստարյանը և մյուս տիպերը:
«Պատվի համար»-ի դրամատիկական արժանիքները:
«Յնվզինե», «Արմենուհի» և Շիրվանզադեյի մյուս
դրամաները: Շիրվանզադեն վարպետ հայ դրամատուր-
գիայի հետսունգուկյանական շրջանի մեծ ներկայա-

ցուցիչը: Շիրվանզադեյի թատրոնը — Հ. Արելյան: Շիր-
վանզադեն և 1905 թվի հեղափոխությունը: Ցարիզմի
մերկացումը «Ձեռքի ականջը» պատմվածքում:

Շիրվանզադեն — մեմուարիստ («Կյանքի բո-
վից»):

Շիրվանզադեյի պրոդայի առանձնահատկություն-
ները: «Արտիստ»-ը իբրեւ այս պրոդայի լավագույն
նմուշներից մեկը: «Արտիստ»-ում և այլ գրվածքնե-
րում հայտնաբերված նկարագրական հմտությունը,
կյանքի խոր ճանաչողությունը, վարպետ տիպագրումը:
Շիրվանզադեյի լեզուն: Շիրվանզադեյի կրած ազդե-
ցությունը յեվրոպական և ուսու կլասիկներից (Տոլ-
ստոյ, Բալզակ, Ֆլոբեր, Զոլա):

Շիրվանզադեն կապիտալիստական ֆորմացիայի
նկարիչ ու հայկական աեալիստական պրոդայի ամե-
նամեծ ներկայացուցիչներից մեկը: Նրա ստեղծագոր-
ծությունների կարեւոր նշանակությունը ԽՍՀՄ-ի ժողո-
վուրդների համար:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՑԱՆ (1850—1900)

Կյանքը: Աշխատակցությունը «Մշակ»-ին Հայկակ
ստորագրությամբ: Աշխատակցությունը «Մասիս»-ին
և «Արեւիկը»-ին:

Արեւիկայի աեալիստական արձակի առաջա-
ցումը 1880-ական թվականների 2-րդ կիսին:

Ա. Արփիարյանի նովելների գեղարվեստական
արժանիքները և թերությունները: Նացիոնալիզմի
արտահայտությունները Արփիարյանի ստեղծագործու-
թյուններին մեջ: Արփիարյանի բանակումը Գր. Ոսյա-
նի հետ՝ աեալիզմի և ուսմանարիզմի շուրջը: Ա. Արփիար-

յանը վորպես գրական ռեալիզմի տեսաբան՝ Նրա ռեալիստական նովելները— «Նորաշէպը», «Յերազի մը դինը», «Դատապարտյալը», «Կատակ մը»: Պոլսահայ բուրժուական բարքերի պատկերումն այդ նովելներում:

ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Կամսարականը վորպես ռեալիստական խոշոր վեպի հորինող, «Վարժապետին աղջիկը» և դրա հասարակական ու գրական արժեքը: Այդ վեպի հիմնական թեման՝ առեւտրական դասակարգի ու մանր բուրժուազիայի փոխհարաբերության խնդիրը: Վաճառականութեան յերկու հակադիր տիպ՝ բացասական (Նահապետյան) և դրական (Արսենյան):

Անդրանիկ Ֆանարժյանն իբրեւ մանր բուրժուազիայի ներկայացուցիչ՝ Նրա հումորական, յերգիծական պատկերը:

Կանանց հարցի լուծումը բուրժուական մարդասիրութեան սահմաններում: «Վարժապետին աղջիկը» վեպի դեղարվեստական արժեքը: Շիրվանդադեյի դրական կարծիքն այս վեպի մասին:

Բուրժուական յերիտասարդութեան ռեալիստական արկերը՝ (Արամը, Թորոս-բեյը): Կամսարականն իբրեւ լեզվի և հումորի վարպետ: Ապահարզանի, դատաւարութեան և այլ նկարագրութեաններն իբրեւ քննադատական ռեալիզմի արտահայտութեան:

ՄՈՒՐԱՑԱՆ (1854—1908 թ. թ.)

Կյանքը: Աշխատակցութեանը «Նոր դար»-ին, «Փորձին», «Արձագանքին», «Լուծային»: Ստեղծա-

գործութեան անբարենպաստ պայմանները: Մուրացանը հաշվապահ ամբողջ կյանքում:

Կյանքի բազմակողմանի ճանաչողութեանը Մուրացանի յերկերում: Հայ գյուղի հակասական իրականութեան արտացոլումը. գյուղի բուրժուազիան, տգետ ու մույլ հոգեվորականութեանը, ցարական պաշտոնյաները, դատարանը, բռնութեանն աշխատավոր գյուղացիութեան վրա, հողագրկութեանը, քաղաքական իրավազրկութեանը, կուլտուրական ծայրահեղ հեռամնացութեանը: «Խորհրդավոր միանձնուհի» (1889): Քաղաքի և գյուղի իրականութեանն այս գլըվածքում: Գյուղի «փրկութեան» մանր բուրժուական ուտոպիստական ծրագիրն իբրեւ պատասխան իրականութեան հակասութեաններին: Միանձնուհու կերպարը. նրա բնավորութեան դժերը, նվիրվածութեանը ժողովրդին, անձնազոհութեանը: «Նոյի ագուստ» (1899): Վեպում Սարգսի կերպարը: Բուրժուական ինտելիգենցիայի քննադատութեանը: Այս գլըվածքի դրական արժանիքները, անկեղծութեանը, հրապարակախոսական ուժգնութեան, կառուցվածքի պարզութեան, տիպերի վորոշակիութեան, կենցաղի վառ պատկերը, զավառարարբառի կենդանութեանը: «Առաքյալ» (1902): Գյուղի իրականութեան ճանաչողութեան խորացումը: Գյուղական միջավայրն իր կոնկրետութեամբ (Զիրուխու, Սեփան): Գյուղական կուլակների և հոգեվորականների տիպերը: Բուրժուական լիբերալ ինտելիգենցիայի վերաբերմունքը դեպի իրականութեան յերկվելները: Կամսարյանի տիպը: Նրա դասակարգային ելութեան մերկացումը: Սաարիական և

նկարագրական տարրերը «Առաքյալ»-ում: Մուրացյանի
 ռեալիզմը: «Լուսավորության կենտրոնը» (1892—93):
 Իրականության ծավալուն ընդգրկումը վեպում: Քա-
 ղաքի պատկերը: Բուրժուազիայի, ազնվականության
 և նացիոնալիստական կուսակցությունների ու ինտե-
 լիգենցիայի սպանիչ ծաղրը: Տիպեր՝ Սարյան, Մոմ-
 ճյան, Շաշյան և այլն: Վեպում նկարագրված «Նոր
 դասակարգի» պայքարն ընդդեմ բուրժուազիայի: Սար-
 յանի դերն այդ պայքարում: Մուրացյանի սատիրայի
 քաղաքական սրությունը, ուսես նարդնիկական
 գրականության ազդեցությունը Մուրացյանի ստեղ-
 ծագործության վրա: Մուրացյանի պատմվածքները՝
 «Հասարակաց վորդեգիրը», «Հարուստները զվարճա-
 նում են», «Անպատճառ իշխանուհի», «Ինչ լալիկ է»,
 «Անմեղ զրույցներ»: Պատմական անցյալը Մուրա-
 ցյանի ստեղծագործության մեջ («Գեվորգ Մարգալե-
 տունի»): Արաբ նվաճողների դեմ հայ ժողովրդի
 մղած պայքարի նկարագիրն այս վեպում: Մու-
 րացյանի հայրենասիրությունը: Վեպի կուռ կոմպո-
 շիցիան: «Ռուզան» դրաման, այս դրամայի ուժան-
 տիկ բնույթը: Պահպանողական տարրերը Մուրացյանի
 աշխարհայացքում: Մուրացյանը հայ վիպասանու-
 թյան խոշորագույն դեմքերից մեկը: Մուրացյանի լի-
 պոն և վոճը:

ԳՅՈՒՂԱԳԻՐՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղապյանի, Աղելյանի, Ծուղուբյանի, Ա. Շահնա-
 ղարյանի, Բաբկենյի, Զավախեցու, Մալխասյանի,
 Թլկատինցու ստեղծագործությունները:

Գյուղագիր գրականության ուժեղ հոսանքը
 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին:
 Գյուղագիր հեղինակների մուտքը գրականության
 մեջ և հայ պարբերական մամուլի դերը («Մուրճ»,
 «Նոր դար» և այլն): Առանձին հրատարակություններ:
 Գյուղագիր հեղինակների խորհրդային հրատարա-
 կությունները: Հայ գյուղագիր գրականության
 առաջացման պատմական-սոցիալական պատճառները:
 Միապետությունը, առեւտրական կապիտալը և կուլակը
 հայ գյուղում: Կարեւոր տեղաշարժեր գյուղական
 իրականության մեջ: Տնտեսական-սոցիալական հոր-
 յերեվույթներ, սոցիալական շերտավորման խորացումը
 և դասակարգային պայքարի սրումը գյուղում:
 Գյուղական պրոլետարիատը: Գյուղացիական գանգ-
 վաժների հարաբերությունները բուրժուական քա-
 ղաքի և նրա «ապականված» կուլտուրայի հետ: Գյու-
 ղացու վերաբերմունքը դեպի մտավորականությունը:
 Գյուղագիր գրականության սոցիալական ու պատմա-
 կան ճանաչողական նշանակությունը: Ճարտական չի-
 նովնիկության և կուլակության քննադատությունը
 գյուղագիրների յերկերում: «Գյուղական բնաշ-
 խարհի» քայքայման ռեալիստական նկարագիրը գյու-
 ղագիր հեղինակների մոտ: Կուլակների, պաշտոն-
 ականների և չքավոր ու միջակ գյուղացու տիպերի շարքը:
 գրանց գեղարվեստական արժանիքները, հայ չարքաշ
 գեղջիկուհին, դպրոցը, կենցաղը, բարքերի և սովորույ-
 թային իրավունքի պատկերացումը: Գյուղացու
 իրավունքի պատկերացումը: Գյուղացու մտայնության
 զարգացումը: Գյուղացու մտայնության զարգացումը:

Պանդխտությունը դեպի կապիտալիստական քաղաքը: Քաղաքի անասնի շահագործման տիպականացումը: Դարձ քաղաքից դեպի գյուղ: Գյուղացիների բացասական վերաբերմունքը կապիտալիզմի նկատմամբ: Դասակարգային պայքարի արտահայտությունները գյուղագրական յերկերում, չքավոր գյուղացիության ըմբոստացման պատկերը կուլակության և քաղաքական իշխանության դեմ, այդ ըմբոստացումների եպիգոդիկ-տարերային բնույթը: Գյուղացիների «փրկչական» ծրագիրը: Պոմյալովսկու, Գլեբ Ուսպենսկու, Զլատովրատսկու և մյուս ռազնուչին-դեմոկրատու գրողների ազդեցությունը: Նմանություններ և տարբերություններ ռուս և հայ գյուղագիր գրականությունների միջև: Տարբերություններ հայ գյուղագիրների միջև: Ժողովրդական բանահյուսության հարցումությունները հայ գյուղագիր գրականության մեջ: Գյուղագիր գրականության ղեկավարը, նրա ժողովրդական լեզուն: Այդ գրականության սերտ կապը Արուստանի, Պոռյանի, Աղայանի և Փափագյանի հետ: Հայ գյուղագիր գրականության գեղարվեստական թերությունները:

ՆԱԲ-ԴՈՍ (1867—1933)

Կյանքը: Աշխատանքը «Նոր-Դար»-ում: Ստեղծագործության շարունակական աշխատանքները (Նար-Դոսը սրբագրիչ): Նար-Դոսը խորհրդային շրջանում: Նար-Դոսը ժողովրդական գրող: Մեր թաղը: արհեստավորության անտեսական քայքայման, տղիտության, նախապաշարմունքների,

հարեցողության և կնոջ իրավադրկության պատկերն այս պատմվածաշարում: Թույլ բողոք տիրող սոցիալական ու քաղաքական կարգերի դեմ: Նար-Դոսը — նովելիստ: Նար-Դոսի վեպերն ու վեպիկները («Տանտիրոջ աղջիկը», «Աննա Սարոյան» (1888), «Սպանված աղավնի» (1888), «Պայքար» (1911), «Մահ» (1912): Բուրժուական քաղաքականության քննադատությունը: Բուրժուական դաստիարակությունն ու նրա ծանր հետեմանքները (Աննայի կերպարը), բնտանիքն ու կնոջ դրությունը (Մանեյի և Սառայի կերպարը), բուրժուական ծայրահեղ ամօրալիզմը (Թուսյան, Բագենյան): «Ավելորդ մարդու» պրոբլեմը (Շահյան):

Նար-Դոսի պիեսները: Նար-Դոսի խորհրդային շրջանի պատմվածքները: Նար-Դոսը ղեկավար: Նար-Դոսի հոգեբանական մեթոդը: Վեպերի դրամատիզմը: Տոլստոյի, Դոստոյևսկու, Տուրգենևի ազդեցությունը: Նար-Դոսի լեզուն՝ կոկ, անպաճույճ, հուզական յերանգավորումով: Յուրաքանչյուր տիպի առանձնահատուկ լիզուն:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ (1861—1915)

Կյանքը: Գր. Զոհրապի առաջին բանաստեղծությունը: («Յերկրագունդ»): «Անհետացած սերունդը» վեպը: Վեպի ընդունելությունը: Գր. Զոհրապը «Մասիս»-ի խմբագիր (1892): Նրա նովելները «Մասիս»-ում և «Արեվիկ»-ում: Գր. Զոհրապի ժողովածուները («Ստեղծատանքի ձայներ» (1900), «Կյանքը ինչպես վորհ» (1911), «Լուս ցավեր» (1911): Բուրժուական բնա-

նիքի ու բարքերի նկարագիրը Գր. Զոհրապի նովելներում: Սիրո և կնոջ պրոբլեմը («Անգրշիրմի սերը», «Յերջանիկ մահը», «Այրին», «Արմենիսա»): Սոցիալական հարցեր արծարծող նովելները («Ճիտին պարտքը», «Ժամին բակը», «Զմրախոտ», «Զաբուղոն», «Փոստալ»):

Գր. Զոհրապը վորպես արեվմատահայ ռեալիստական արձակի և հատկապես նովելի խոշոր ներկայացուցիչ: Նրա նովելների գեղարվեստական արժանիքները՝ սեղմ ու հստակ վոճը, պատկերավորությունը, լիրիզմը՝ կոմպոզիցիայի վարպետությունը, Զոհրապի լեզուն: Գր. Զոհրապը — ռեալիզմի տեսաբան: Գր. Զոհրապի կրած դրական ազդեցությունը: Ե. Զոլա, Մուպսան:

ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄՅԱՆ (1838—1917)

Կյանքը: Ալիշանին աշակերտելը և նրա ազդեցությունը առաջին շրջանի բանաստեղծությունների վրա: Ռեալիզմը պոեզիայի մեջ: Աճեմյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն («Ժպիտք և արաստեք», 1871): Սոցիալական անհավասարության արտացոլումն Աճեմյանի բանաստեղծությունների մեջ: Աճեմյանի գեմոկրատիզմը. համակրանքն աշխատավորների, մշակների, պանդուխտների նկատմամբ: Աճեմյանի բանաստեղծությունների յերգիծական բնույթը, ծաղր՝ հոգեվորականության, աղայության նկատմամբ («Դրամ», «Ի նպաստ աղքատության», «Պանդուխտ յեղբայրներ», «Խեղճ Մկո», «Տիպար մը» բանաստեղծությունները): Մ. Աճեմյանի մյուս ժողովածուները («Լույս և ստվերք» (1887), «Գարնան

նովեր» (1892): Աճեմյանի պոեզիայի առանձնահատուկ քաղաքացիական շեշտը: Աճեմյանի լեզուն, վոճը, տաղաչափական արվեստը: Հ. Պարոնյանի «Դրամ»-ի քննադատությունը:

Մ. Աճեմյանի «Ծեր սիրահար» կոմեդիան: Շիլլերի «Ավադակներ»-ի թարգմանությունը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1864—1929)

Կյանքը: Կրթությունը Լազարյան ճեմարանում և Մոսկվայի համալսարանում: Ուսանողական շարժումների ազդեցությունը Հովհաննիսյանի վրա: Մանկավարժական յերկարատև գործունեությունը Եջմիածնում, Թբիլիսում, Բագվում: Հովհաննիսյանը խորհրդային շրջանում, Հովհաննիսյանի առաջին ժողովածուն (1887): Հովհաննիսյանի լիրիկան: Նոր թեմատիկան: Անհատի ներքին աշխարհի դրսևորումը Հովհաննիսյանի պոեզիայում («Ախ, տվեք ինձ քաղցր մի քուն» և այլն):

Սիրո մոտիվներ («Յերգ», «Փափաղ»): Բնության նկարագրություն («Աշուն», «Վորպես հաղթանգամ մի ծերուկ հսկա»): Դյուղի ծանր վիճակը («Դյուղի ժամը») և հայրենիքի վեշտը («Մայրը», «Աշուղը»): Հովհաննիսյանի հայրենասիրությունը («Նոր դարուն»): Ժողովրդական մոտիվների մշակումը («Արազ», «Ալադյազ», «Արտավազ», «Վահագնի ծնունդը»): Հայրենասիրության գաղափարը բալլադների մեջ: Պատմական անցյալի վերագնահատումը («Ավերակ», «Սյունյաց իշխանը»):

Հովհաննիսյանի ժանրերի բազմազանությունը: Ցարական ցենզուրան Հովհաննիսյանի դեմ: Հովհաննիսյանի կիրթ, կոկ, մաքուր, հուզականությամբ հագեցված գրական լեզուն: Հովհաննիսյանի նորմուծությունը հայ պոեզիայի լեզվի ասպարիզում: Նրա պատկերների թարմությունը: Նրա նորմուծությունները բանաստեղծական չափերի մեջ: Հովհաննիսյանը հմուտ թարգմանիչ («Յերգչի անեծքը», «Պրովեթևոս»): Հովհաննիսյանի ստեղծագործական հվուլյուցիան: Հովհաննիսյանի պոեզիան վորպես նոր, բարձր հտապ հայ պոեզիայի պատմության բնագավառում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ (1865—1917)

Կյանքը: Ծառուրյանի լիրիկան: Արձագանքներ աղպային շարժման: Սերը և բնությունը նրա պոեզիայում: Ծառուրյանի հայրենասիրությունը («Մի լար բլբուլ», «Սիրուն գարուն»): Ծառուրյանի պոեզիայի գեմոկրատիզմը: Աշխատանքի գովքը նրա ստեղծագործությունների մեջ («Սերմնացան», «Յերկրի մշակներ»): Հեղափոխության արձագանքները («Բանվորունու որորը»):

Ծառուրյանի յերգիծական վոտանավորները («Գրչի հանաքներ»): Բուրժուական բարեգործության և հոգեվորականության ծաղր: Ծառուրյանը վորպես թարգմանիչ Պուշկինի, Լերմոնտովի, Կոլցովի, Նեկրասովի, Նադսոնի, Պլեչեյեվի, Տուրգենևի: Այդ թարգմանությունների արժեքը և դերը: Ծառուրյանի գերը հայ վերկայի զարգացման պատմության մեջ:

ԱՇՈՒՂ ԶԻՎԱՆԻ (1846—1919)

Կյանքը: Զիվանու գեմոկրատական քնարը, բողոք սոցիալական կյանքի ու անհավասարության դեմ: Բողոքի մոտիվները Զիվանու ստեղծագործության մեջ: Ցարական ու բուրժուական կարգերի, հասարակական ամեն տեսակի չարիքների խարաղանում: Բուրժուական վատասերված բարքերի, ինտելիգենցիայի ու նրա դաստիարակության, դատավորների, անարգարության, հոգեվորականների քննադատությունը: Զիվանին—ընչազուրկ և կեղեքվող դասակարգերի մոտորունների և իղձերի արտահայտիչ: Զիվանու յերգիծանքը: 1905 թվի ուժեղ ազդեցությունը Զիվանու քնարի վրա: Ժողովուրդների համերաշխությունը քարոզը Զիվանու յերգերում: Զիվանու պոեզիայի թույլ կողմերը (կրոնաբարոյախոսություն և այլն): Զիվանու դպրոցն ու նրա ժամանակակից հայ աշուղական պոեզիան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հակոբ Պարոնյան, «Յերկրի ժողովածու», 1, 2, 3, 4 և 5 հատորները:
2. Մեքենց, «Թորոս Լեվոնի», «Յերկունք», «Թողորոս Ռշտունի»:
3. Տյուսաբ, «Մայա», «Արաքսիա», «Սիրանուշ»:
4. Րաֆֆի, «Փունջ», 2-րդ հատ., «Վոսկի աքաղաղ», «Զահրուժար», «Մինն ալպես, մյուսն ալպես», «Թաշագողի հիշատակարան», «Զալալեղին», «Խենթ», «Սամվել», «Կալծեր»:

դեմ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: Ռեալիստական ստեղծագործության պարզացման բարձրակետը (Հ. Թումանյան),

Հեղափոխական պրոլետարական գրականության սկզբնավորումը Հակոբ Հակոբյանի գլխավորությամբ ու նրա պայքարը ազգայնական ուժանակների ու սիմվոլիզմի դեմ: Արաղու, Մաղաթ Պետրոսյանի, Անուշավան Վարդանյանի, Կամարու և Մելիքյանի (Դեզուշկա) ստեղծագործությունները: Պրոլետարական գրողների «Կարմիր մեխանիկներ» ժողովածուները (1914, 2-րդ պրակ): Թարգմանություններ Գորկուց: «Կայծ»-ի և «Պայքար»-ի (1-ին բոլշևիկյան շրջանի) խոշոր դերը պրոլետարական գրականության զարգացման ասպարիզում: Հայ գրականության ուսուցիչական հոսանքի լավագույն արագիցիաների յուրացումը և ոգտագործումը նոր գրականության շարժման ներկայացուցիչների կողմից: Հեղափոխական ուժանակների և սոցիալիստական ուսուցիչի սկզբնավորումը Հակոբ Հակոբյանի պոեզիայում: Սիմվոլիզմի առաջացումը հայ գրականության մեջ ու նրա արտահայտությունը Տերյանի ու առանձնապես Մեծարենցի ստեղծագործություններում:

1. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ (1860—1923)

Կյանքը: Մուսքը գրականության մեջ (1890): Աշխատակցություն «Մուրճ»-ին և «Տարազ»-ին: Գրական ուժերի համախմբման փորձերը: «Վերնատուն»: Թումանյանը համակիր 1905 թ. ուսանական հեղափոխության: Թումանյանի հաշտարար դերը հայ-թյուր-

քական ընդհարումների ժամանակ: «Հայ գրողների կովկասյան ընկերություն»: Թումանյանը վորպես հրապարակախոս: Թումանյանը վորպես փայլուն քննադատ: Նրա խորը և առողջ մտքերը ուս և յեվրոպական կլասիկների մասին: Թումանյանը և Բրյուսովի «Պոեզիա Արմենիի»-ն: Լայն շփում ուս և անգլերկովկասյան ժողովուրդների համերաշխության համար: Խորհրդային որիենտացիա: Մահը: Թումանյանի աշխարհայացքը: Թումանյանը վորպես գյուղական դեմոկրատիայի արտահայտիչ: Թումանյանի պատրանքները ազգային ազատագրական հարցում: Հայ ժողովրդի կյանքի, կենցաղի, հասկացողությունների, աշխարհայացքի ու յերազանքների լայն ու ռեալիստական արտացոլումը Թումանյանի պոեզիայում և պրոզայում: Նահապետական գյուղը, նրա ծայրահեղ հետաձուլությունը, սոցիալությունը, վայրենի նախապաշարմունքները, կնոջ ծանր վիճակը («Անուշ», «Լուսնի Սաքուն» ու «Սարո» պոեմները, «Անիծած հարսը» լեգենդը, «Նետյի քարաբաղնիսը», «Գարո ընդու շերամապահությունը» և այլ պատմվածքներ): Բուրժուական կարգերի մերկացումը («Գիքոր», «Պոետն ու մուսոն»): Լուսավորության քարոզը («Իմ ընկեր Նետոն»): Դասակարգային հասարակարգի քննադատություն ու ժխտումը, սոցիալական հավասարության յերազանքը, հայ ժողովրդի ըմբոստացման պատկերավորումը ընդդեմ տիրող դասակարգերի, ազգային-քաղաքական ճնշման ու նոր կյանք ստեղծելու կոչը («Հառաչանք», «Թագավորն ու չարչին», «Չարի վերջը», «Հին որհնություն», «Պարոդիա»), Թումանյանը վորպես ժողովուրդների յիւրաքուրեք ջատագով:

Թուժանյանի հեքիաթները: Ժողովրդական բանահյուսութեան լայն ստեղծագործումը թե՛ հեքիաթներում և թե՛ ամբողջ ստեղծագործության մեջ: Հեքիաթների իրական աշխարհը: Նրանց թարմությունն ու անմիջականությունը: Աշխատավոր մարդու բարեմասնությունների մեծարումը («Վոսկու կարասը» և այլն): Շահագործող դասակարգի իշխանության խիստ քննադատությունը («Քաջ Նազարը», «Վոսկի քաղաքը»):

Հայկական հայտի մշակումն ու այդ մշակման յեղանակները Թուժանյանի մոտ: «Սասունցի Դավիթ»: Հայրենիքի պաշտպանության գաղափարը՝ իբրեւ «Սասունցի Դավիթ»-ի իդեալական առանցք: Աշխատանքի մեծարումը: Դյուղացիական հոծ մասսաների խաղաղ կենակցությունը: Սասունցի Դավիթը մարդու իդեալ (քաջ, ազնիւ, հայրենասեր, ազատասեր): Թուժանյանը ժողովրդայնութեան մարմնավորում: Թուժանյանի ոպտիմիզմը: Մարդկության սոցիալական կյանքի վերածնման անհողողոյ հավատ: Աշխարհը—չեն ու լի, կյանքը, տիեզերքը—բարիք: «Հաղարան բլրուք»-ը, «Քառյակներ», «Քեֆ անողին քեֆ չի պակասիլ»: Թուժանյանը հայ ժողովրդի լավատեսութեան ու հանձարի արտահայտություն: Թուժանյանի պոետիկոն: Բազմաժանրութուն (պոեմ, բալլադ, լիբեկական վոտանավոր, քառյակ, հեքիաթ, նովել): Թուժանյանի լեզուն՝ մաքուր ու կենդանի, զբաղուն լեզուն համեմված ժողովրդական կենդանի վոճերով: «Անուշ»-ի, սերտ կապը ժողովրդական սիրային հեքիաթների հետ. «Անուշ»-ի և մյուս պոեմների զբաղառիկվը: Թուժանյան

յանի պոեմների և լեգենդների կատարելությունը: «Թմբկաբերդի առումը», «Փարվանա», նրանց կառուցվածքը: Թուժանյանի պրոզան (սեղմություն, յուրաքանչյուր բառը՝ տիպադրում, կուռ շարահյուսություն): Թուժանյանի նովելների գեղարվեստական բացառիկ արժանիքները: «Գիքորի» կոմպոզիցիան: Տիպերի վարպետ կառուցումը (Բաղադ Արտեմ, Նատո, Գիքոր, Քեոի Խեչոն, Գաբո բիձա, Կիրակոս և այլն): Թուժանյանի նուրբ հյուժուրը («Մերոնք»): Թուժանյանը վարպետ մեծ թարգմանիչ (Պուշկինի, Լերմոնտովի, ռուսական և սերբական հայտի և այլն): Թուժանյանը մեծ ռեալիստ: Թուժանյանի ռեալիզմը պոեմներում, պատմվածքներում: Թուժանյանի ռեալիստական ստեղծագործություններն իբրեւ հայ ժողովրդի կուլտուրական ինքնությունության արտահայտություն:

Թուժանյանի անմիջական կապն Աղայանի և Հովհաննիսյանի հետ (հայ գրականության պատմության գծով): Թուժանյանը—գեղագետ հայ գրականության գեղագիտական-ռեալիստական հոսանքների ու ժողովրդական բանահյուսության Թուժանյանի կապը Պուշկինի, Լերմոնտովի և Նեկրասովի հետ: Թուժանյանն ու Իրանի մեծ բանաստեղծները: Թուժանյանը վարպետ աղային ժողովրդական հանձարիկ պոետ:

2. ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ (1875)

—Կյանքը: Իսահակյանը Յեկրոպոյում: Տեղական շվիում յեկրոպական կուլտուրայի հետ: Վերագործարտասանմանից Խորհրդային Հայաստան:

Իսահակյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Յերգեր ու վերքեր» (1898): Այդ ժողովածույի մոտիվները հետագա զարգացումն ու խորացումը: Աշխատանքը, սերը, բնությունը (առանձնապես Ալադյալը), հովվերգական կենցաղը Իսահակյանի քնարերգության մեջ: Դժգոհություն և ըմբոստացում սոցիալական անհավասարության և անարդարության դեմ: Ժողովրդական ստեղծագործության ու մոտիվների շեշտված ներկայությունը Իսահակյանի պոեզիայում: Իսահակյանի լրերկայի հուղականությունն ու հմայքը: Իսահակյանի սովորաբար: 1905 թ. հեղափոխությունը: Ռեակցիան Ռուսաստանում ու նրա վերջը արտացոլումն Իսահակյանի յերկերում:

«Արու-Լալա-Մահարի» (1909): Բուրժուական հասարակության, բուրժուական հայրենիքի, իրավունքի, բնաանիքի, կրոնի և այլնի քննադատությունն այս պոեմում: Այդ քննադատության անհատապաշտական, անարխիստական յերակետը: «Արու-Լալա-Մահարի» պոեմի գեղարվեստական արժանիքները (գունագեղություն, բնության վառ պատկերացում, բանաստեղծական չափի ճարտար ներդաշնակումը պոեմի հիմնական պատկերի—բնթացող կարավանի հետ, ճուրղու, խորը լիրիզմ): «Արու-Լալա Մահարի»-ի թարգմանություններն այլ լեզուներով:

«Մասմա Մհեր» (1938): «Մասմա Մհեր»-ի բովանդակությունը: Իսահակյանի վարպետությունը ժողովրդական եպոսի մշակման ասպարիզում: «Մասմա Մհեր»-ի յուրահատուկ լեզուն, պատկերները, կառուցվածքը: Իսահակյանի կապը թուրքական և Աղայանի հետ:

Իսահակյանի արձակն ու նրա առնչությունը հեղինակի պոեզիայի հետ: «Լիրիկ»-ը և մանր պատմվածքներ: «Ուստա Կարո»-ն: Իսահակյանն ու Հայնս:

3. ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ (1866—1920)

Կյանքը: Գրական գործունեության առաջին շրջանը: Բաֆֆու սովորաբար հաղթանակումը Փափազյանի ստեղծագործությունների մեջ և անցումը ռեալիզմին: 1905 թ. հեղափոխության ազդեցությունը Փափազյանի վրա: («Վիշապ» և այլն): Փափազյանի ստեղծագործությունների ժանրային բազմազանությունը (վեպ, դրամա, պատմվածք, նովել և այլն): Թեմատիկ բազմազանությունը: Արևիկյան ժողովուրդների կյանքն ու կենցաղը («Ալեմգեր»), հայ գյուղը և գյուղացիությունը («Գյուղից» պատմվածաշարը, «Ժայռ»), վերջինիս շերտավորումը և մուտքը կապիտալիստական խոշոր կենտրոնները: Ինտելիգենցիայի («Եմմա», «Ծովափին»), քրդերի և հայ բուհների կյանքը: Փափազյանի քննադատական վերաբերմունքը դեպի ժամանակակից իրականությունը. արևիկյան ժողովուրդների ըմբոստացումը բռնակալության դեմ, չքավոր գյուղացիության հուսահատական վիճակը և նրա ցատումը ցարիզմի, գյուղի վաշխառություն և կուլակության դեմ («Գյուղից» պատմվածաշարը): Ժողովրդի ընդվզումը բռնակալության դեմ: Փափազյանի ոպոիմիզմը: Փափազյանի աշխարհայացքը. հակասություններ: Սիմվոլիզմի ազդեցություններ մի շարք յերկերում: Փափազյանի արվեստը: Փափազյանի

ստեղծագործության առանձնահատկությունները ազգային սահմանափակության հաղթանարումը թեմատիկայում: Փափագյանի լիզվի մատչելի պարզությունը, գունագեղությունը: Վոճի հրապարակախոսական ախտիվությունը: Փափագյանը վորպես ախտակազիր: Փափագյանը վորպես գրականության պատմաբան:

4. ՅԵՐՎԱՆԻ ՈՏՅԱՆ (1869—1926)

Կյանքը: Ժուռնալիստական գործունեությունը («Արեւիկը», «Ազատ բեմ», «Սաշալան», «Կոտափնատ» և այլն): Ուսյանի լիբերալ աշխարհայացքը: Ուսյանի յերգիծանքը՝ ուղղված ազգայնական-բուրժուական կուսակցությունների (դաշնակցական, հնչակյան) դեմ, «Հեղափոխության մակաբույծներ» (1899—1900):

Ուսյանի վիպական գործերը: Արեւմտյան առեկտրական բուրժուազիայի և հոգեվորականների շահամուտության, փողամուտության և բարոյական աշխատության մերկացումը լիբերալիզմի դիրքերից («Բնատաշիք, պատիվ, բարոյական», «Միջնորդ Տեր-պապան», «Ազգային բարերար», «Վաճառականի ձր նախկները»): Ուսյանի վիպերի ճանաչողական արժեքը: Ուսյանի յերգիծանքը բուրժուական մամուլի նկատմամբ: Ուսյանի «Տաներկու տարի Պոլսն գուրս» մեմուարները: Ուսյանի ուսուցիչն ու այդ ուսուցիչի առանձնահատկությունները: Ռեալիստական կերպարներ՝ Դուկաս Եֆենդի, Կոզմա Դամիրանոսյան, Տեր-Միքայիլ և այլն: Ուսյանի յերգիծանքը: Ուսյանի կրած գրական ազդեցությունները (և. Զոլա, Դիկկենս, Պարոյան): Այդ ազդեցությունների բնույթը: Ուսյանը թարգմանիչ (Լ. Տոլստոյ՝ «Աննա Կարենինա», «Հարություն», Զոլա՝ «Արգասավորություն»):

5. ՄԻՍԱԲ ՄԵԾԱՐԵՆՑ—ՄԵԾԱՏՈՒՆՅԱՆ (1886—1908)

Կյանքը: «Փունջերը» ուսուցչին բանաստեղծություն տպագրությունը 1903 թ. «Հանրագիտական» հանդեսում 1907 թ.: «Ծիածան» և «Նոր սողեր» ժողովածուները: Բանակրիվը Մեծարենցի բանաստեղծությունների շուրջը: Իր պատասխանը քննադատներին («Քննադատություն»): Մ. Մեծարենցը վորպես արեւմտահայ սիմվոլիզմի ամենացայտուն արտահայտիչներից մեկը և Մեծարենցի պանթիզմը: Մեծարենցի հոգեոտությունը, թախծի սոցիալական պատճառները: Համիդյան ծանր ռեժիմը և ռեակցիան: Մ. Մեծարենցի վոճը, լիզուն, պատկերավորությունը, տաղաչափական արվեստը, ալիսերացիան և այլն: Մեծարենցի կրած գրական ազդեցությունը (Պ. Վերլեն, Շ. Բոտլեր, մասամբ Պ. Դուրյան): Մեծարենցի և Տերյանի փոխադարձությունը: Մեծարենցի:

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ (1884—1915)

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ (1885—1915)

Կենսագրական տեղեկություններ Վարուժանի և Սեվակի մասին: Վարուժանի ուսումնասությունը Վենետիկում: Վարուժանը Բելգիայում, Եմիլ Վերհարնը և Դ. Վարուժանը: Վարուժանի «Գողգոթայի ծաղիկները» և «Հացին յերգը» ժողովածուները: Ընդվզումները և սուլթանի դեմ «Բանվորունին», «Դադար», «Մեծնող բանվորը», «Մայիսի մեկը» ստեղծագործությունները: Աշխատավոր ժողովրդի թշվառ կացության պատկերումը Վարուժանի գործերում ու նրա համակրանքը կապիտալիզմի գոհների նկատմամբ: Գյուղական բնակավայրի, պեյզաժի, գյուղացու աշխատանքի, հողի, մարդու և սիրտ գովերգումը Վարուժանի:

յերկերում: Վարուժանի պոեմները («Հարձ» և այլն): Ազգայնականությունը Վարուժանի մի շարք ստեղծագործություններում:

Ռ. Սեվակի ստեղծագործությունները: Բուրժուական իրականությունը քննադատությունը նրանցում («Շանհոգի»): Սեվակի գեոմոկրատիզմը:

7. ՎՍՀԱՆ ՏԵՐՅԱՆ (1885—1920)

Կյանքը: Տերյանի մասնակցությունը Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության: Տերյանի առաջին ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջներ» (1908): Այդ ժողովածույի մեջ արտահայտած հիմնական տրամադրությունները՝ մեկություն, մոռացում, մեղմություն: Հեղափոխության պարտությունից՝ լքված ինտելիգենտի արամադրությունների արտացոլումը այժմ ժողովածվում: Տերյանի յերկրորդ՝ «Բանաստեղծություններ» ժողովածուն (1912) վերադառնում է «Մթնշաղի անուրջներ»-ի արամադրությունների շարունակություն, ընդլայնում ու զարգացում: Առարկայնություն ժրխումը Տերյանի լիրիկայի մեջ: Տերյանի սիմվոլիզմը: Ռուսական և յեվրոպական ազդեցությունները: Ռուսական առաջին հեղափոխության անդրադարձումները Տերյանի պոեզիայում: Հեղափոխական շարժման վերելքը և Տերյանը («Վերադարձ»): Ռեալիզմն այդ շրջանի գործերում: Տերյանի ստեղծագործության առավել հասուն՝ «Բանաստեղծություններ»-ին հաջորդող շրջանը: Հայաստանի ծանր վիճակը վերադառնում է հեղափոխական պայմաններում: Վարուժանի ամենաազդեցիկ ստեղծագործությունը, այդ ծանր վիճակի անդրադարձումը Տեր-

յանի պոեզիայում: Տերյանի հակադրումը մարտական նացիոնալիզմին: Տերյանի ստեղծագործությունների «Նայիրյան» շարքը: Տերյանի պատրանքներն այդ յերկերում (Հայաստանի ազատություն մասին): Տերյանի լիրիկայի նոր հատկությունները (կոնկրետություն, առարկայնություն): Տերյանի տեղեկեցը՝ մոտենալու ժողովրդին ու ժողովրդական ստեղծագործությանը: Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության անդրադարձումը Տերյանի ստեղծագործություններում: Ստեղծագործության նոր յեղանակների վերադառնում: Տերյանի բարձր պոետական կուլտուրան և արվեստը: Տերյանի հափերի բազմազանությունն ու հարստությունը: Նոր հափերի կիսուսի Բանաստեղծական ձևերի բազմազանություն (սոնետ, տրիոլետ, կադել և այլն): Տերյանի հղված յերաժշտական լեզուն: Վահան Տերյանի քրտնաջան աշխատանքը խոսքի վրա: Տերյանի շարահյուսությունը: Տերյանի լեզուն՝ վերադառնում է հայ գրական լեզվի պարմություն մեջ:

Տերյանի բարձրորակ թարգմանությունները Ռուս-թավելուց, Բողլևերից, Բրյուսովից, Հայնեից և ուրիշներից: Լենինի մի շարք գործերի տերյանական թարգմանությունները: Տերյանը վերադառնում է գրականագետ և հրապարակախոս: Տերյանի պոետական զգացումը:

Տերյանը ՌԽՍՖՀ անդամագրության կենդանագործակցությանը: Տերյանի աշխատանքն Ազգ. Ժողովում: Ընկեր Ստալինի գեկավարությունը:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ (1876—1927)

Կյանքը: Կուրղինյանի ստեղծագործության առաջին շրջանը: Քաղաքային գեոմոկրատիայի ծանր վիճա-

կի ու նրա դժգոհության արտացոլումը Կուրդինյանի ստեղծագործության մեջ: Ժողովրդական լեզվի և մտքի վնասների լայն ողտաղործումը: Կուրդինյանի ստեղծագործության հետագա շրջանը: 1905 թվի հեղափոխության, Մ. Գորկու և Հ. Հակոբյանի ստեղծագործությունների վնասկան ազդեցությունը: «Արշալույսի ղողանջներ» (1907): Հեղափոխական անձնագոհության, համառ պայքարի ու վոդեվոլությունից 1905 թվի հեղափոխության շրջանում: Կուրդինյանի ստեղծագործությունների մեջ: Կուրդինյանի ստեղծագործությունների անմիջականությունը, անկեղծությունը, պատկերավորությունը, թափը, աշխուժությունը: Կուրդինյանի լեզուն: Կուրդինյանի անհետեվողականությունը՝ ռեալիստի տարրերին: Կուրդինյանի քնարի աշխուժացումը՝ Հոկտեմբերից հետո:

ՀԱԿՈՒՅ ՀԱԿՈՒՅԱՆ (1865—1937)

Կյանքը: Ուսումնառությունը հայրենի քաղաքի՝ Գանձակի (այժմ Կիրովոպոլսկ) դիմնադիպում: Գիմնադիպից հեռացվելը Ալեքսանդր 3-րդի դեմ թուրքիկ գրեթե համար: Հակոբյանը Բազմում: Հակոբյանը Թբիլիսում: Մասնակցություն աշակերտական անլիգալ խմբերին ու թերթերին: Վոդեվոլություն նախադասնով: Գրական գործունեության սկիզբը: Հակոբյանը բանկի հաշվապահ: Հակոբյանը բուլշևիկ: Վոստիկանություն հոտապնդումները: Հակոբյանը Խորհրդային շրջանում: Հակոբյանի հուլիսյանը: Հակոբյանը ժողովրդական գրող: Հակոբյանի ստեղծագործությունը 90-ական թվերին: Թեմատիկան (արհեստավո-

րություն կյանքը): Ժողովրդական մոտիվները մշակումը: Առաջին ժողովածուն: Թարգմանություններ Ադա-Նեգրից: Հակոբյանի ստեղծագործությունը 1905 թվի հեղափոխության նախորդին և հեղափոխության ընթացքում: «Արթին իմ աշխարհը» վորպես պոետի կրեդո: «Կաթավարը» վորպես բանվորի փառաբանման ու նրա ծանր աշխատանքի յերգ: «Մեկ էլ, մեկ էլ» վորպես կոչ տապալիլու ցարական ինքնակալությունը: «Հեղափոխություն» և «Յիս այն եմ սիրում...» բանաստեղծությունների բարձր արվեստը, քաղաքացիական մոտիվների փայլուն զուգորդումը պատկերավորության վոդեվոլա՝ տաղի ու հուժկու լեզվի հետ: Հակոբյանի պոեզիայի կուսակցականությունը: Նրա ստեղծագործությունների խիղախությունը և վոդեվոլությունը: Հակոբյանը—հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր և սոցիալիստական ռեալիզմի նախահայր՝ հայ գրականության մեջ: Հակոբյանը ռեալիստի տարրերին: «Մեռան, չկորան», «Պահակը», «Ազգայիններին» և այլ բանաստեղծությունները: Հակոբյանի գովքն՝ ընկած մարտիկներին. խրախույսն՝ ամուր մնալ իր դիրքերում՝ միշտ լցված պայծառ հավատով դեպի հեղափոխության հաղթանակը: Հակոբյանի հակադրումը նացիոնալիստներին ու կրքոտ կանչը պատրաստ լինել «զարթոց որին», հեղափոխությանը: Քաղաքը և գործարանը հակոբյանի պոեզիայում:

Հակոբյանը հետեվողական բուլշևիկ-գրող: Հակոբյանը հեղափոխության պոետատոր, պրոպագանդիստ, ժուռնալիստ: Բուլշևիկյան ամրակուռություն հստակ անդրադարձումը Հակոբյանի պոեզիայում:

Հակոբյանի պոեմները: Ճնոր առավոտ», պրոբ-
տարական կոլեկտիվիզմի հակադրումն անհատապաշ-
տության: Հավասարության յերազանք ապագա սո-
ցիալիստական կարգերի մասին: Հնկիր Ստալինի
գլխակիցներ՝ Ս. Սպանդարյանի և Ս. Շահումյանի
բարձր գնահատականը Հակոբյանի պոեզիայի մասին:
Հակոբյանի գլխավորած պրոլետարական գրական շար-
ժումը: Սոցիալիստական շինարարության օրտադո-
լումը Հակոբյանի պոեզիայում: Պոեմներ Շիրկանալի,
Վոլխովստրոյի մասին: Սոցիալիստական խաղաղ
աշխատանքի մեծարանքը: Հակոբյանի բանաստեղծու-
թյունները նվիրված Լենինին,՝ Ստալինին, Շահումյա-
նին: Հակոբյանը—ժողովրդական գրող:

Հակոբյանի անմիջական կապը Աղայանի, Թու-
մանյանի և Իսահակյանի հետ: Հակոբյանի նույնքան
անմիջական կապը Նեկրասովի, Գորկու ու ուսական
մինչ-հոկտեմբերյան պրոլետարական պոեզիայի հետ:
Հակոբյանի պոեզիան—Անդրկովկասյան ժողովրդական
և միութենական բոլոր ժողովուրդների աշխատավո-
րական մասսաների սեփականություն:

Ռոմեն Ռոլանը և Լուենաչարսկին Հակոբ հակոբ-
յանի մասին:

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- | | |
|---------------------|---|
| 1. Հովհ. Թումանյան, | «Դեղարվեստական յերկեր». |
| 2. Ավ. Իսահակյան, | «Բանաստեղծություններ». |
| 3. Վրթ. Փափուզյան, | «Գյուղից», «Զրույցներ»,
«Ժայռը», «Եմժա», «Ալիմ-
գիր», «Ասի», «Պատկերներ
թուրքահայերի կյանքից». |

4. Ֆերվանդ Ռոյան,
5. Միսաք Մեծարեմ,
6. Դանիել Վարուժան,
7. Ռուբեն Սեվակ,
8. Վահան Տերյան,
9. Շուշանիկ Կուրդիմյան,
10. Հակոբ Հակոբյան,

«Յերկերի ժողովածու».
«Բանաստեղծություններ».
«Հեթանոս յերգեր», «Հա-
ցին յերգը».
«Բանաստեղծություններ».
«Բանաստեղծություններ».
«Արշուրույի զոդանջներ».
«Բանաստեղծություններ»:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Մ

Հայ գրականության պատմության դասընթացը
Մանկ. Ինստիտ. Հեռակա բաժնի II, III և IV կուրսե-
րում ա[ւանդվելու յե հեղինակների հետեվյալ հաջոր-
դականությամբ*):

2-րդ կուրս

1. Հարություն Ալամդարյան
2. Մեսրոպ Թադիսդյան
3. Ռաչատուր Արովյան
4. Միքայել Նալբանդյան
5. Ռաֆայել Պատկանյան
6. Սմբատ Շահազիզ
7. Գերհ Գուրջյան
8. Ղազարոս Աղայան
9. Գաբրիել Սուռճուկյան
10. Բաֆֆի

*) Յուրաքանչյուր հեղինակի յերկերը ցույց են տրված
հայ գրական. պատմության ներկա ծրագրում:

3-րդ կուրս

11. Ա. շրջանն (հին) ամբողջովին
12. Մուրացան
13. Շիրվանզադե
14. Նար-Դոս
15. Վ. Փափազյան
16. Գյուլագիրներ
17. Հովհաննես Հովհաննիսյան
18. Արեքսանդր Ծատուրյան
19. Հովհաննես Թումանյան
20. Ավետիք Իսահակյան
21. Վահան Տերյան
22. Շ. Կուրդինյան
23. Հակոբ Հակոբյան

4-րդ կուրս

24. Ա լ ի շ ա ն
25. Մկրտիչ Պեշկեթյան
26. Պետրոս Դուրյան
27. Մկրտիչ Աճեմյան
28. Հակոբ Պարոնյան
29. Ծերենց
30. Սրբուհի Տյուսաբ
31. Արփիար Արփարյան
32. Տիգրան Կամսարական
33. Գրիգոր Զոհրապ
33. Յերվանդ Ռոյան
35. Միսաք Մեծարենց
36. Դանիել Վարուժան
37. Ռուբեն Սեվակ

Խմբագիր՝ Հ. ՄԿՐՏՉԱՆ

Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սրբագրել՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Գլավիտի լրագոր Ե—1554, Պատկեր 80, տիրած 2500

Հանձնված և արտադրության 25 փետրվարի 1940 թ.

Ստորագրված և տպագրության 14 ապրիլի 1940 թ.

Մանկ. Խնամառուտի տպարան, Մարջախի փ. 17, Յերևան 1940 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0372808

63.925

ԳԻՆԸ 2 Ռ.

ПРОГРАММА
ПО ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Изд. Пед. Института, Ереван 1940 г.